

Յայաստանում շուկայական տնտեսությանն անցման պայմաններում տեղի են ունենում տնտեսական եւ քաղաքական փոփոխություններ, որոնք մեծ ազդեցություն են ունենում ֆինանսական ոլորտի վրա: Վերջինի մասն են վարկային կազմակերպությունները, որոնք հայաստանյան ֆինանսական շուկայում գործառնել են 2003 թվականից («Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2002թ.): Գայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությանը հատուկ են ձիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաների: Կապիտալի եւ վարկային շուկաներում վերջերս դիտվող ճգնաժամը ավելի է բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում:

Վարկային կազմակերպությունների հիմնական գործունեությունը վարկերի եւ լիզինգի տրամադրումն է, ինչպես նաեւ արժեթղթերով գործարքների իրականացումը:

Ըստ ՀՀ Զաղաքացիական օրենսգրքի 887 հոդվածի 1-ին կետի՝ վարկային պայմանագրով բանկը կամ վարկային այլ կազմակերպություն (վարկատուն) պարտավորվում է պայմանագրով նախատեսված չափերով եւ պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել փոխառուին, իսկ փոխառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը եւ տոկոսներ վճարել դրանից:

Այս սահմանման համաձայն՝ հաշվապահական հաշվառման տեսանկյունից վարկերի հաշվառման առանձնահատկությունները ներկայացված են ՀՀՀՀՍ 39-ում, քանի որ այն համապատասխանում է ֆինանսական ակտիվների 3-րդ դասի, այն է «Կազմակերպության կողմից տրամադրված փոխառություններ եւ դեբիտորական պարտքերի» սահմանմանը, ըստ որի՝ «Կազմակերպության կողմից տրամադրված փոխառություններ եւ դեբիտորական պարտքեր են այն ֆինանսական ակտիվները, որոնք ստեղծվում են կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապահին դրամ, ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով, բացառությամբ նրանց, որոնք տրամադրվում են անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ: Վերջիններս դասակարգվում են որպես առետրական նպատակներով պահվող»: Գետեաբար՝ վարկերը այս դասի մասնավոր դեպք են՝ որպես պարտապահին կազմակերպության տրամադրած դրամ:

Կազմակերպությունը վարկը ճանաչում է այն դեպքում, երբ դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Գետեաբար՝ անմիջապես պայմանագրի կնքումից հետո կազմակերպությունը պետք է ճանաչի վարկն իր հաշվեկշռում՝ մի կողմից որպես դրամական միջոցների արտահոսք՝ կրեդիտագրելով դրամական միջոցներ հաշվառող հաշիվ (10-րդ խումբ) եւ դեբետագրելով 12 խմբի համապատասխան հաշիվ:

Վարկերի ապահովվածության կարեւորագույն միջոց է գրավը, որի հաշվառումը նախատեսվում է որպես գրավ չօգտագործվող ակտիվներից առանձին, երբ վարկային կազմակերպությանը ըստ պայմանագրի թույլ է տրված վաճառել կամ

այն նորից գրավ դնել առանց սահմանափակումների: Սակայն այնպիսի սահմանափակումների առկայության դեպքում, ինչպես պարտապահի իրավունքը եւ կարողությունը՝ ետ ստանալու գրավի առարկան ծանուցումից հետո կարճ ժամանակահատվածում, ապա կազմակերպությունը գրավի առարկան չի ճանաչում իր հաշվապահական հաշվեկշռում:

Սկզբնական ճանաչումից հետո վարկերը պետք է չափվեն ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսարդույքի մեթոդը, այն է՝ լողացող դրույքով ֆինանսական գործիքների համար դրամական միջոցների որոշելի հոսքերի պարբերական վերահաշվարկումը, որը կատարվում է տոկոսի շուկայական դրույքների փոփոխություններն արտացոլելու նպատակով, փոփոխում է դրամային ֆինանսական ակտիվի արդյունավետ եկամտաբերությունը: Դրամական միջոցների հոսքերի այսպիսի փոփոխությունները ճանաչվում են ակտիվի մնացած ժամկետի ընթացքում կամ մինչեւ ակտիվի տոկոսարդույքի հաջորդ վերանայումը, եթե վերջինը կատարվում է շուկայական դրույքին համապատասխան:

Եթե հավանական է, որ կազմակերպությունն ի վիճակի չի լինի հավաքագրել վարկի գումարը (հիմնական գումարը եւ տոկոսները), ապա առկա է արժեզրկումից կամ անհուսալի պարտքերի գծով կորուստ, որն իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի եւ սկզբնական արդյունավետ տոկոսարդույքով գեղջված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքի տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է նվազեցվի մինչեւ դրա գնահատված փոխհատուցվող գումարը, իսկ կորստի գումարը՝ ճանաչվի որպես տվյալ ժամանակաշրջանի ծախս: Անհավաքագրելիությունը են արժեզրկումը վարկերի համար ճանաչվում է չափվում են պորտֆելի հիմունքով: Փոփոխական տոկոսարդույք ունեցող վարկերի համար փոխհատուցվող գումարը չափելիս որպես գեղջման դրույք օգտագործվում է պայմանագրի համաձայն որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսարդույքը: Այնուհետեւ երբ, օրինակ, վարկառուի վարկունակության բարելավման արդյունքում, արժեզրկումից կամ անհուսալի պարտքի գծով կորուստը նվազում է, ապա վարկի՝ որպես ֆինանսական ակտիվի արժեքի իջեցումը պետք է հակադարձվի: Հակադարձման գումարը պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկային կազմակերպությունների վարկերի որոշակի մասը կարող են տրամադրվել արտարժույթով, որոնք հաշվառումը որոշակի առանձնահատկություններ ունի՝ կապված արտարժույթային տարբերությունների ճանաչման եւ ներկայացման հետ: Այս դեպքում հաշվառման հիմք է ՀՀ հաշվապահական հաշվառման 21 ստանդարտը: Այս պարագայում գործարքը սկզբնական ճանաչման պահին պետք է ճանաչվի հաշվետվական արժույթով (այն է՝ ֆինանսական հաշվետվությունները ներկայացնելիս օգտագործվող արժույթը)՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով հաշվետվական արժույթի եւ

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԳՐԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ատենախոսության թեմա՝
Երկարաժամկետ ֆինանսական
ակտիվների հաշվառման եւ
վերահսկողության
կատարելագործման ուղիները
(ՀՀ վարկային
կազմակերպությունների օրինակով)
Գիտական ղեկավար՝
Աղասի ՍԱՐԳՍՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Տարեւիկ
ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ
«Հաշվապահական
հաշվառում եւ
աուդիտ»
ամբիոնի
ասպիրանտ



արտարժույթի միջև գործարքի օրվա դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը: Հաշվեկշռի ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հողվածները ներկայացվում են փակման փոխարժեքով: Վարկերի մարման արդյունքում փոխարժեքի տարբերությունները կամ հաշվետվության մեջ գրանցման դեպքում փոխարժեքի տարբերությունները հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս դրանց առաջացման ժամանակահատվածում: Երբ մարումը կատարվում է հաջորդող հաշվետու ժամանակաշրջաններում, մինչև մարման ժամանակահատվածն ընկած յուրաքանչյուր միջանկյալ ժամանակաշրջանում ճանաչված փոխարժեքային տարբերությունը որոշվում է այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած փոխանակման փոխարժեքի փոփոխությամբ:

Ֆինանսական շուկայի մասնակիցների ֆինանսական հաշվետվություններում արտացոլվում է կազմակերպության ֆինանսական վիճակի եւ գործառնությունների վրա գործարար միջավայրի ազդեցության գնահատականը՝ տրված ղեկավարության կողմից, որը, սակայն, կարող է տարբերվել ապագա գործարար միջավայրից: Այդ իսկ պատճառով շատ կարեւոր է կազմակերպել հիմնական գործունեության հստակ փաստաթղթավորումը եւ հաշվապահական հաշվառման կազմակերպումը՝ օրենսդրական դաշտի բոլոր պահանջներին համապատասխան:

ՀՀ Եներգետիկայի ոլորտին հաղորդման եւ էլեկտրաէներգետիկ շուկային ծառայություններ մատուցող ընկերություններում եկամուտների ու ծախսերի հաշվառումը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով: Դա պայմանավորված է ինչպես ոլորտի գործունեության բնույթով, այնպես էլ շուկայում ունեցած մենաշնորհային դիրքով: Վերջինների հետեանկը, ի տարբերության տնտեսության մյուս ոլորտների, այստեղ, բացի հաշվապահական եւ հարկային հաշվառումից, հատկապես կարեւորվում է պետության կարգավորիչ դերը, որն արտահայտվում է այդ շուկայում ծառայություններ մատուցող ընկերությունների գործունեության նկատմամբ կարգավորող մարմնի հետեայլ գործառնությունների իրականացմամբ.

- գործունեության լիցենզավորումը,
- կարգավորող մարմնի հաշվետվություններ ներկայացնելու նպատակով լիցենզավորված անձանց համար հաշիվների, ենթահաշիվների համակարգի ներդրումը՝, համաձայն ազգային հաշվային պլանի, հաշվապահական հաշվառման անկէղող օրենքների եւ իրավական այլ ակտերի,
- կարգավորվող սակագների սահմանումը՝,
- գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև Եներգիայի եւ (կամ) բնական գազի մատակարարման (ծառայությունների մատուցման), ինչպես նաեւ սպառողների հետ կնքվող Եներգիայի եւ (կամ) բնական գազի մատակարարման (առուվաճառքի) պայմանագրերի օրինակելի ձեւերի կամ պարտադիր պայմանների սահմանումը, գործունեության լիցենզիա ունեցող անձանց միջև կնքված պայմանագրերի գրանցումը,

● շուկայում դրսեւորվող տնտեսական հարաբերությունների կանոնակարգման համար անհրաժեշտ կանոնների եւ կարգերի սահմանումը,

● կարգավորող մարմնի կողմից իր իրավասությունների շրջանակներում իրավական ակտերի սահմանումը, դրանց կատարման գործընթացի վերահսկողության իրականացումը,

● սպասարկման որակի նկատմամբ պահանջների սահմանումը,

● գործունեության լիցենզիա ունեցող անձանց կողմից ներկայացվող գարգացման ներդրումային ծրագրերի ուսումնասիրումը՝ ապագա սակագներում ներդրումների (լրիվ կամ մասնակի) ներառման կամ մերժման նպատակով՝:

Ներկայում ոլորտի կազմակերպությունների մատուցած ծառայություններին համապատասխան համախառն եկամտի եւ ինքնարժեքի՝ ըստ հաշվապահական, հարկային եւ սակագնային հաշվառման մոտեցումները որոշակիորեն տարբերվում են:

Այսպես, հաշվապահական հաշվառման տեսանկյունից ծախսերի եւ եկամուտների հաշվառման հիմնական մոտեցումները սահմանվում են «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով եւ ՀՀ-ում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական այլ ակտերով: Համաձայն ՀՀՀՀՍ 18 «Հասույթ» ստանդարտի՝ հասույթը սահմանվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսք, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ մասնակիցների կողմից սեփական կապիտալում կատարված ներդրումների հետեանկը կապիտալի աճի:

ՀՀ Եներգետիկայի ոլորտին հաղորդման եւ էլեկտրաէներգետիկ շուկային ծառայություններ մատուցող ընկերություններում եկամուտների եւ ծախսերի հաշվառումը իրականացվում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 02.12.2003թ. թիվ 82Ն «Կարգավորմանը վերաբերող հաշվետվությունների ներկայացման համար հաշիվների եւ ենթահաշիվների հաստատման մասին» որոշմամբ սահմանված հաշվային պլանի վեցերորդ՝ եկամուտներ, յոթերորդ՝ ծախսեր եւ ութերորդ՝ կառավարչական հաշվառման դասերի հաշիվներով, որոնցում եկամտային եւ ծախսային հողվածները սահմանված են՝ հաշվի առնելով էլեկտրաէներգետիկ ոլորտի կազմակերպությունների կողմից իրականացվող գործունեության արդյունքում ձեւավորվող եկամուտների եւ ծախսերի առանձնահատկությունները: Նշենք, որ հաշվային պլանի